ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մայիսի 2024 թվականի N 650 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՐՁԱՔՐԵԱ-ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ և 13-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ կազմակերպության՝

1) գործունեության առարկան քրեագիտական հետազոտությունների և դատական փորձաքննությունների բնագավառում գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտամեթոդական աշխատանքների կատարումն է.

2) գործունեության նպատակներն են՝

ա. փորձագիտության զարգացումը,

բ. փորձաքննությունների, գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտամեթոդական այլ աշխատանքների կազմակերպումը և կատարումը,

գ. դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգումը, նորերի մշակումը, դրանց փորձարկումը և գործածության համար երաշխավորումը,

դ. փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստումը և կատարելագործումը, ինչպես նաև սահմանված կարգով նրանց որակավորման հավաստումը,

ե. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով քրեագիտական հաշվառումների իրականացումը,

զ. մինչդատական վարույթին օժանդակելը:

3. Թույլատրել կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) բնական, տեխնիկական, հասարակական և հումանիտար գիտությունների, ինչպես նաև տեխնոլոգիաների բնագավառներում հետազոտությունների ու մշակումների կատարում.

2) կազմակերպության գործունեության առարկային առնչվող սպասարկման ծառայությունների մատուցում.

3) հրատարակչական գործ.

4) դասընթացների կազմակերպում՝ լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրով փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման համար:

4. Հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

5. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության հաշվեկշռում առկա գույքը՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրակցված՝ Երևանի քաղաքի Արցախի փողոցի 8/16 շենքը՝ 0,16383 քառ. մետր մակերեսով (սեփականության իրավունքի պետական

գրանցման վկայական՝ N 29032012, տրված՝ 29.03.2012 թ.) անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրակցել կազմակերպությանը:

7. Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և վերջինիս վերապահել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ տասնհինգօրյա ժամկետում կազմակերպության հետ կնքել սույն որոշման 6-րդ կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջոցների հաշվին:

9. Կազմակերպության պետական գրանցման և կնիքի ձեռքբերման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջոցների հաշվին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ